Պրակտիկայի հնարավորություններ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողները պրակտիկաներն իրականացնում են հետևյալ կազմակերպություններում.

- Հայաստանի ֆոնդային բորսա,
- ՀՀ Կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն,
- ՀՀ-ում գործող բանկերի մասնաճյուղեր,
- Տավուշի մարզպետարան, քաղաքապետարաններ,
- ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչություն,
- Երևանի ծրագրավորման կազմակերպություններ,
- ՅԵLL-Էքստրիմ պարկ, «Ապագա Ռեզորթ»,
- Տավուշի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոն, Տավուշի մարզի հյուրանոցներ և ռեստորաններ,
- ՀՀ հանրակրթական դպրոցներ,
- Դիլիջանի կենտրոնական դպրոց («Այբ»),
- «ՍՕՍ» մանկական գյուղեր ՀԲՀ ԾՔԻ «Իջևան» մասնաճյուղ, «Հույսի կամուրջ» ՀԿ, ՎիվաՍել-ՄՏՍ,
- «Հայանտառ» ՊՈԱԿ, «Քարարտ» գործարան,
- Իջևանի գինու, կոնյակի գործարան ՓԲԸ,
- թանգարաններ, արվեստանոցներ և այլն:

Աշխատանքի հնարավորություններ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտներին տրվում է Երևանի պետական համալսարանի կողմից տրվող պետական նմուշի դիպլոմ:

Նրանք կարող են զբաղեցնել հետևյալ պաշտոնները.

- ուսուցիչ,
- հոգեբան,
- դասվար,
- թարգմանիչ,
- լրագրող,
- սրբագրիչ, խմբագիր,
- արվեստաբան,
- մշակույթի մասնագետ,
- զբոսավար,
- էքսկուրսավար,
- գովազդային գործակալ,
- մենեջեր,
- բնապահպան,
- դիզայներ, մոդելավորող,
- տնտեսագետ,
- ֆինանսիստ, հաշվապահ,
- մարքեթոլոգ,
- վարկային մասնագետ,
- ռիսկերի կառավարման մասնագետ
- ծրագրավորող,
- տեղեկատվական բազաներ ստեղծող մասնագետ,
- վիճակագրական տվյալների վերլուծաբան,
- դեկորատիվ արվեստի մասնագետ
- ուսումնական վարպետ,
- ինտերիերի/էքստերիերի մասնագետ և այլն:

Մենք աջակցում ենք մեր շրջանավարտներին մասնագիտական աճի և աշխատանք գտնելու հարցում:

Մագիստրատուրայի հնարավորություն

Մեր շրջանավարտները կարող են ուսումը շարունակել ԵՊՀ-ի մագիստրատուրայում, ինչպես նաև մասնաճյուղի «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի մագիստրատուրայում և ցանկացած մասնագիտությամբ ստանալ մանկավարժի որակավորում:

www.ijevan.ysu.am

2020Թ. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրթական ծրագիր	Ընդունելության քննություններ		Ուսման վարձը (ՀՀ դրամ)
	մրցութային քննություն	մրցութային առարկա*	
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ			
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	ՀԼԳ(գ)	Մ*	350000
Հոգեբանություն	ՀԼԳ(գ)	ՕտԼ* կամ Կ*	350000
Պատմություն	ՀՊ(գ)	ՀԼԳ*	350000
Հայոց լեզու և գրականություն	ՀԼԳ(գ)		320000
Անգլերեն լեզու և գրականություն	ԱնգԼ(գ)		400000
Ֆրանսերեն լեզու և գրականություն	ՖրԼ(գ)		400000
Ռուսաց լեզու և գրականություն	ՌԼ(գ)	ՀԼԳ*	380000
Տնտեսագիտության ֆակուլտետ			
Ֆինանսներ (ըստ ոլորտի)	Մ(գ)	ՀԼԳ*	450000
Զբոսաշրջություն	ՀԼԳ(գ)	ՕտԼ* կամ Աշխ*	350000
Բնական գիտությունների ֆակուլտետ			
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ* կամ ԱնգԼ*	400000
Բնապահպանություն և բնօգտագործում	Կ(գ) կամ Ֆ(գ)	Ք*	350000
Կիրառական արվեստի ֆակուլտետ			
Դիզայն **	Գծն.		320000
Դեկորատիվ-կիրառական արվեստ **	Գծն.		320000

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Աստղանիշ(*) - Ընդունելության մրցութային քննության արդյունքներով հավասար միավորների դեպքում առավելությունը կտրվի աստղանիշով(*) առարկայից ավարտական փաստաթղթում առավել բարձր գնահատական ունեցող դիմորդներին:

Աստղանիշ (**) - Սահմանված են ներբուհական քննություններ:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐԻ ՁԵՌՁՄԱՆ ՃԿՈՒՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՏԵՍԱԿ ԾՐԱԳՐԵՐ:



ԵՊՀ ԻՄ-ը սիրով սպասում է Ձեզ

Հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ, ք.Իջևան, Ուսանողական 3
Հեռ.՝ (+374 96) 987-654, Էլ.փոստ՝ ephimmkpk@gmail.com
www.facebook.com/ysuib

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Մեր մասին

1994թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ կառավարության որոշմամբ Իջևանի տարածաշրջանային քոլեջը վերակազմավորվեց որպես Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ:

Իր գործունեության ընթացքում բուհը տվել է շուրջ 6400 շրջանավարտներ, որոնց մեծամասնությունը հաջողությամբ աշխատում է հայագիտության, մշակույթի, հումանիտար, սոցիալ-տնտեսական և բնական գիտությունների ոլորտներում:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում դասավանդում են բարձրակարգ դասախոսներ, այդ թվում ԵՊՀ-ից և ՀՀ առաջատար բուհերից հրավիրված գիտությունների դոկտորներ և պրոֆեսորներ:

Այժմ կրթօջախն ունի 4 ֆակուլտետ, 11 ամբիոն, հեռակա ուսուցման բաժին, գրադարան, համակարգչային սրահներ, լաբորատորիաներ, արվեստանոցներ, մարզադահլիճներ:

Մասնաճյուղի գրադարանը հագեցած է տարալեզու մասնագիտական, գեղարվեստական և այլ ոլորտներին վերաբերող գրականությամբ:

Բուհն ունի նաև էլեկտրոնային գրադարան (ijevanlib.ysu.am):

Ինչու ընդունվել ԵՊՀ ԻՄ

Մենք առաջարկում ենք.

- որակյալ կրթական ծրագրեր,
- աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխան ուսուցում,
- ուսանողակենտրոն կրթական միջավայր,
- ակտիվ ուսանողական կյանք,
- բնակավայրից ոչ հեռու և մատչելի կրթություն:

ԵՊՀ ԻՄ-ը համագործակցում է ՀՀ և արտերկրի տարբեր կազմակերպությունների, մասնավորապես Ռուսաստանի Դաշնության ու Ֆրանսիայի համալսարանների հետ, և մեր լավագույն ուսանողները մասնակցում են փոխանակման ծրագրերի:

Կրթօջախի տարածքում գործում են.

- ԱՄՆ Խաղաղության կորպուսի «Անգլերենի ռեսուրս կենտրոն»,
- Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն,
- Ֆրանսերենի ուսուցման կենտրոն,
- Ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոն,
- Հոգեբանական կենտրոն,
- Տավուշի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոն,
- «Դիջիթայզեթ-պլանետ» ծրագրավորման կենտրոն:

Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնը ԵՊՀ ԻՄ-ում վարում է ծրագրավորման դասընթացներ:

Ուսանողական կյանք

Մասնաճյուղում գործում են.

- Ուսանողական խորհուրդ,
- Ուսանողական գիտական ընկերություն,
- ուսանողական բանավեճի ակումբ,
- համայնքային զարգացման կամավորական խմբեր:

Նշված կառույցների կողմից, ինչպես նաև տարբեր կազմակերպությունների հետ համատեղ իրականացվում են մշակութային և սպորտային միջոցառումներ, մրցույթներ, ցուցահանդեսներ, նշանավոր մարդկանց հետ հանդիպումներ, գիտաժողովներ, կլոր սեղան-քննարկումներ, դասընթացներ, սեմինարներ, ինտելեկտուալ խաղեր և այլն:

Կազմակերպվում են նաև ամառային ճամբարներ, արշավներ և էքսկուրսիաներ ՀՀ և Վրաստանի տեսարժան վայրեր:

Մեր ուսանողները և դասախոսները մասնակցում են ՀՀ-ում և արտերկրում կազմակերպվող գիտաժողովների, կոնֆերանսների, մարզամշակութային ստուգատեսների և գրանցում են նշանակալի արդյունքներ:

«Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն ուսանողներին և դասախոսներին հնարավորություն է տալիս հրատարակել իրենց գիտական աշխատանքները: